«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա ***Անգլերեն***

Մասնակից Զինաիդա Հովսեփյան

Ղեկավար Գայանե Վարդանյան

Թեմա Բառապաշարի ուսուցում

Երևան, 2023թ.

Բովանդակություն

Ներածություն **3**

1. Հարակցություններն ու ռիթմավորումը որպես բառապաշարի ուսուցման մեթոդ **4**

2. Դերախաղը որպես բառապաշարի ուսուցման միջոց **7**

Եզրակացություն **13**

Օգտագործված գրականության ցանկ **14**

Ներածություն

Ժամանակակից արագ զարգացող աշխարհում աշակերտներից պահանջվում է ավելի ու ավելի շատ հմտություններ և կարողություններ: Դրանք անհրաժեշտ են տեղեկատվություն ստանալու և կյանքում կիրառելու համար: Օտար լեզուները բացառություն չեն: Մասնավորապես անգլերենի ինքնուրույն ուսումնառության բազմաթիվ տարբերակներ կան: Դրանք ներառում են ամենատարբեր հեռուստատեսային հաղորդումներ, տարբեր տեսակի հավելվածներ, ինտերնետ ռեսուրսը, որտեղ առաջարկվում է լեզվական նյութերի լայն ընտրանի՝ այբուբեն սովորելուց մինչև անգիր անել երգեր և ֆիլմերի դիտում անգլերենով: Մեծ նշանակություն ունի հաղորդակցությունը լեզվի զարգացման ե ամրապնդման գործում:

Այնուամենայնիվ հիմնաքարային է մնում լեվական հմտությունների սերմանման և զարգացման առաջնահերթությունը հենց դպրոցում: Հիմնական խնդիրները որին պարբերաբար բախվում են աշակերտները մեծամասամբ կայանում են մատուցվող բառապաշարը հաջողությամբ յուրացնելու և ըստ այդմ հաղորդակցային հմտությունները զարգացնելու մեջ: Մեխանիկական անգիրը բացի աշակերտների համար ոչ հաճելի և դժվար լինելուց, նաև չի ապահովում ստացվող տեղեկատվության վերարտադրությունը երկարաժամկետ կտրվածքով:

Դժվար է գերագնահատել օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհում: Այս խնդիրը այժմէական է սապայն ոչ միայն այսօր, ուստի պատահական չէ, որ տարիների ընթացքում մասնագետների կողմից հավաքագրվել ու մշակվել են մի շարք կիրառելի մեթոդներ ուսումնառության գործընթացն առավել դյուրին դարձնելու և բառապաշարի ուսուցման առավել արդյունավետ մեխանիզմների մշակման համար:

Սույն հետազոտական աշխատանքը կոչված է այս ոլորտում տեղ գտած որոշակի կիրառելի պրակտիկաների քննարկմանն ու այդպիսով բառապաշարի ուսուցման հիմնական արդյունավետ մեխանիզմների վերհանմանը:

:

1. Հարակցություններն ու ռիթմավորումը որպես բառապաշարի ուսուցման մեթոդ

Ժամանակակից պայմաններում օտար լեզվի դասավանդումը ենթադրում է ուսումնական գործընթացի կազմակերպման այնպիսի առանձնահատկություններ, որ արդյունավետորեն կնպաստեն թե՛ լեզվական նյութի յուրացմանը, թե՛ ուսումնասիրվող լեզվի «աշխարհին» ծանոթությանը: Յուրաքանչյուր օտար լեզվի դաս յուրօրինակ մշակութային խաչմերուկ է՝ միջմշակութային հաղորդակցության պրակտիկա, քանի որ յուրաքանչյուր օտար բառն արտացոլում է ուսումնասիրող սուբյեկտի համար այլ լեզվամտածողական միջավայր. յուրաքանչյուր բառի հետևում կա ազգային գիտակցությամբ պայմանավորված աշխարհընկալում: Լեզուն, մտածողությունը և մշակույթը այնքան սերտորեն են փոխկապակցված, որ գործնականում կազմում են այս բաղադրիչներից բաղկացած մեկ ամբողջություն, որոնցից ոչ մեկը չի կարող գործել (և հետևաբար գոյություն ունենալ) առանց մյուսների[1]:

Լեզուն որպես հաղորդակցման միջոց դասավանդելիս ուսուցիչն առաջին հերթին կենտրոնանում է հնչյունական, քերականական և բառապաշարային նյութի հավասարակշռված, համակողմանի ներկայացման վրա, որը պետք է նպաստի ճիշտ արտասանության, ինտոնացիայի, ինչպես նաև աշակերտների շրջանում հաղորդակցական ունակությունների, լեզվի զգացողության և օտար մշակույթի նկատմամբ դրական վերաբերմունքի զարգացմանը[2]:

Ուսուցման կարևորագույն խնդիրներից է աշակերտի մոտ լեզվի յուրացման որոշակի փուլին համապատասխան բառապաշարի ձևավորումը: Ավանդական մեթոդներով այս խնդրի լուծումը միշտ էլ եղել է բարդ աշխատանք, որը ուսումնական գործընթացի ավելի վաղ փուլում կարող է բարդանալ երեխաների հոգեֆիզիոլոգիական որոշ առանձնահատկություններից ելնելով: Բառապաշարի նյութի ուսումնասիրման գործընթացում ծառացած տարբեր բնույթի դժվարությունների հաղթահարման գործում մեծ նշանակություն ունի ժամանակակից հոգեբանությունը:

Ժամանակակից հոգեբանությունը վաղուց զբաղվում է հիշողության հետ կապված խնդիրներով և առաջարկում տարբեր միջոցներ դրանց հաղթահարման համար: Եվ դա

---

[1] Տե՛ս Ս. Գ. Տեր-Մինասովա, Լեզու և միջմշակութային հաղորդակցություն. ուս. ձեռնարկ, Մոսկվա, 2000թ, 624 էջ, էջ 25

[2] Տե՛ս Դ. Ս. Վաշչուկ, Դպրոցականների համար ամառային արձակուրդներին օտար լեզու սովորելու արտադասարանական միջոցառումների կազմակերպում, Tomsk State Pedagogical University Bulletin, 2011, էջ 195-198

զարմանալի չէ, քանի որ մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներում հաջողությունը մեծապես կապված է որոշակի տեղեկատվության վերարտադրության ունակության հետ: Պատահական չէ, որ ժամանակի ընթացքում ձևավորվել են բազմաթիվ մնեմոնիկ համակարգեր, որոնք դյուրացնում են մատուցվող նյութը մտապահելու գործընթացը[3]: Մնեմոտեխնիկան ոչ այլ ինչ է, քան մեծապես տարածում գտած և կիրառվող այնպիսի մեթոդների, ռիթմերի, պատկերների կամ կերպարների ամբողջություն, որոնք կոչված են խթանելու տեղեկատվության մտապահումը և բնականաբար, դրա վերարտադրումը: Այսպես օրինակ մնեմոտեխնիկայի հաջողված օրինակ է մտապահելու ենթակա բառերի ռիթմիկ զուգավորումը, ինչպես օրինակ՝ *“one is a bun, “two is a shoe”, “three is a tree”, “four is a door”, “five is a hive”, “six is a stick”, “seven is a heaven”, “eight is a gate”, “nine is a line”, “ten is a hen”* և այլն:

Հարկ է նշել, որ բառապաշարի ձևավորման նման մնեմոտեխնիկա կիրառելիս, ուսուցիչը պետք է հաշվի առնի, որ օտար լեզվի ռացիոնալ ուսումնասիրության համար անհրաժեշտ է ոչ թե ուղղակի հարակցում ձևավորել յուրաքանչյուր առանձին բառի համար, այլ ստեղծել հարակցությունների համալիր, որ կապահովի տեղեկատվության ավելի մեծ պաշարի ընկալման հնարավորություն՝ փաթեթային դասակարգման ենթարկելով մատուցվող ինֆորմացիան: Օրինակ վերոնշյալ հարակցումները, որ պետք է աշակերտի համար հեշտացնեն թվերի անգլերեն անվանումները հիշելը որոշակի առումով փոխկապակցված են և կարող են ներկայացվել գյուղական միջավայրի պատկերացմամբ (փեթակ, պարան, ծառ, փայտ և այլն):

Բառապաշարի ուսուցանման գործընթացում ռիթմիկ հարակցություններ կիրառելիս ցանկալի է նախապատվությունը տալ անգլերենում առկա և տարածված նմանօրինակ արտահայտությունների: Մասնավորապես, գոյություն ունի պատմականորեն ձևավորված, բավականին ինքնատիպ լոնդոնյան ռիթմավորված ժարգոնը (Cockney rhyming slang): Այստեղ բառերը ռիթմավորվում եմ արտահայտություններով. օրինակ՝ “feet – plates of meat, head – loaf of bread, sister – skin and blister, car – jam jar, stairs – apples and pears, house – cat and mouse, phone – dog and bone, bed – Uncle Ned, money – bees and honey/bread and honey, wife – trouble and strife, tea – Rosie Lee, bread – Uncle Fred, believe – Adam and Eve”, և այլն:

Անգլերենի ուսուցման մեկ այլ տարածված կիրառելիությամբ միջոց են հանդիսանում ոտանավորները վերցված և՛ ժողովրդական, և՛ գեղարվեստական գրականությունից: Բառապաշարի ուսուցման համար տարբեր տարիքային խմբերի

[3] Տե՛ս Ռ. Սոլսո, Կոգնիտիվ հոգեբանություն, 2002թ, 592 էջ, էջ 226-227:

աշակերտների համար հաջողված օրինակներ որպես կարող ենք դիտարկել ներքոբերյալը.

One,two,three , four
Mart at the cottage door
Five, six, seven, eight
Eating cherries of a plate.

If you can keep your head when all about you
Are losing theirs and blaming it on you;
If you can trust yourself when all men doubt you,
But make allowance for their doubting too;
If you can wait and not be tired by waiting,
Or being lied about, don't deal in lies,
Or being hated, don't give way to hating,
And yet don't look too good, nor talk too wise…

Առաջին օրինակը բնականաբար նախընտրելի է ցածր դասարաններում ուսանող աշակերտների համար, իսկ երկրորդը (Ռեդյարդ Քիփլինգ «Եթե» (“If”))՝ առավել բարձր դասարանների աշակերտների համար:

Աշակերտների բառապաշարը ռիթմավորված հարակցումների և ոտանավորների միջոցով համալրելը մի քանի դրական հատկություններ ունի: Մասնավորապես, այն ունի ռեալ հոգեբանական հիմքեր և ոչ միայն հեշտացնում է բառապաշարի յուրացումն, այլ նաև խթանում է լեզուն սովորելու հետաքրքրվածությունը՝ «հարկադրելով» աշակերտին անհրաժեշտ բառը հիշելու համար մշտապես մտաբերել հանգավորող բառերը, ինչպես նաև զարգացնելով վերջինիս կոգնիտիվ ունակություններն ու խոսակցական հմտությունները ուսումնառության բոլոր մակարդակներում:

Կրտսեր դասարաններում բառապաշարի ուսուցման հաջողված միջոց են դիտարկվում նաև երգերը: Դրանք ապահովում են ուսուցման բարձր արդյունավետություն: Դասարանում երգերի օգտագործումը ոչ միայն զվարճալի

մթնոլորտ է ստեղծում, այլ նաև օգնում են հիշողության մեջ երկարաժամկետ ամրագրել բառերը: Մի շարք կիրառելի երգերի օրինակներ նշված են ստորև՝

- Phonics Song
- Phonics Song 2
- Letter A Song
- How Are You Today?
- What's Your Name?
- Hello Song by Perter Weatherall
- Good Morning Song For Kids
- Hello!
- The Greetings Song
- How's the Weather Song

2. Դերախաղը որպես բառապաշարի ուսուցման միջոց

Բառապաշարի յուրացման հայտնի և առավել արդյունավետ մեթոդներից է դերախաղը: Ներկայացվող տեքստում որոշակի պյուժեի առկայությունն ու աշակերտի կողմից դրսևորվող ստեղծագործականությունը մեծապես նպաստում է բառապաշարի ամրապնդմանը: Ստեղծագործական բնույթի աշխատանքն արտահայտվում է կենդանի խոսքի միջոցով, որին աշակերտը փորձում է հաղորդել զգացմունքային երանգ և արտահայտչականություն: Վերջինս շատ կարևոր է հատկապես, երբ հակադրության մեջ է դրվում բառապաշարի զուտ «մեխանիկական ընկալման» հետ, ինչն ամենևին չի նպաստում ներկայացվող նյութը երկարաժամկետ հեռանկարով աշակերտի հիշողության մեջ ամրագրելուն և հետագայում վերարտադրելուն:

Դերախաղը հնարավորություն է ընձեռում աշակերտներին ընդլայնելու մտահորիզոնը՝ օգտագործելով երևակայությունն ու ստեղծագործական մտածողությունը:Այսպես՝ աշակերտն ինքնուրույն կարող է որոշել (մտածել) թե ինչ կարելի է պատասխանել այս կամ այն իրավիճակում, որ ստեղում են խաղերը: Քերականության և բառապաշարի ուսումնասիրման "միապաղաղ" դասերի կողքին դերախաղը հնարավորություն է տալիս որոշակիորեն հանգստանալ, վերացնում լարվածությունը, հնարավոր սթրեսը. հանդիսանում է որպես լիցքաթափման և միաժամանակ, բնականաբար, նոր բառապաշարի յուրացման արդյունավետ միջոց:

Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում այն հանգամանքը, որ նմանատիպ դերախաղերը հաճախ կրում են մրցակցային բնույթ ուստի անգամ այն աշակերտները, որ սովորաբար պասիվություն են դրսևորում դասերի ընթացքում, նպատակադրվում են (ինչը պետք է խրախուսվի ուսուցչի կողմից) հաղթել հետևաբար նաև խոսել անգլերեն: Դերախաղին մասնակցելու մոտիվացիայի պակասը աշակերտների մոտ հիմնականում կարող է բացատրվել լեզվական սակավ իմացությամբ, հետևաբար ուսուցչի կողմից դերախաղի կազմման համար կարևոր է ձևավորել հաջողության մոտիվացիա: Ներառելով բոլոր աշակերտներին՝ դերախաղերը «հարկադրում են» փոխգործակցել, հաղորդակցվել տարեկիցների հետ, ինչը ևս անառարկելի մեծ նշանակություն ունի:

Անգլերենի ուսուցումն առավել մատչելի դարձնող դերախաղերը դասակարգվում են օտարերկրյա մասնագետների կողմից (Գ. Հայդ, Ա. Մեյլի, Ա. Դաֆֆ, Ջ. Օլլեր և այլք):

Բանավոր հաղորդակցային հմտությունների զարգացման համար առավել նախընտրելի են ելութային խաղերը (աշակերտը ելույթ է ունենում), քանի որ նման ձևաչափը հնարավորություն է տալիս աշակերտներին հաղորդակցության մեջ մտնել և կիրառել նախորդիվ սովորած գիտելիքները: Դերախաղերի տարածված տեսակներ են իրավիճակային խաղերը, դերային բաշխմամբ խաղերը (հստակ կերպարների անունից հանդես գալով), գործառնական բնույթի խաղեր, երբ աշակերտները որոշակի խնդիրներ պետք է լուծեն:

Ինչպես կարելի է նկատել դերախաղերը ծառայում են որպես արդյունավետ միջոցներ բառապաշարի, քերականության ակտիվացման, արտասանության խնդիրների վերացման և բանավոր հաղորդակցության հմտությունների զարգացման համար:

Հարկ է նշել որ դերախաղ կազմակերպելու համար ուսուցիչների կողմից պետք է հաշվի առնվեն մի շարք այնպիսի գործոններ, ինչպիսիք են ուսանողների տարիքը, աշակերտների շրջանում լեզվի ուսուցման մակարդակը, երեխաների թիվը, խաղի համար հատկացված ժամանակը և այլն: Որոշ խաղեր պահանջում են ուսուցիչներից օգտագործել հավելյալ նյութեր կամ ունենալ լրացուցիչ սարքավորումներ՝ հեշտությամբ ճանաչելի իրեր, առարկաներ, վայրկյանաչափ և այլն: Բնականաբար ուսուցիչը լավ պետք է պատկերացնի խաղի «կանոններն» ու կարողանա մատչելի կերպով բացատրել աշակերտներին: Երբ արդեն հստակեցված են այդ կանոնները ուսուցիչը պետք է հետևի դրանց պարտադիր կատարմանը: Խաղի ընթացքում կանոնների փոփոխություններից անհրաժեշտ է

խուսափել: Այնուամենայնիվ կանոնների նախապես առկա լինելը չի ենթադրում որ դրանք ուսուցչի կողմից նախքան խաղը սկսելը փոփոխության ենթարկվել չեն կարող[4]:

Ստորև ներկայացված են խաղային մեթոդներով ուսուցման մի քանի հաջողված և կիրառելի մեթոդներ.

Խաղ 1-ին. Լրացնել բաց թողնված տեղերը գլուխկոտրուկի միջից վերցված անհրաժեշտ բառերով.

On February 14, my boyfriend gave me a big box of __ __ __ __ __ __ __ __ __ __ and a beautiful red __ __ __ __. I gave him a __ __ __ __ and a __ __ __ __ __ __ __ __ __ card. In the evening we went to a fancy restaurant. We ordered a delicious __ __ __ __ __ __ and a bottle of __ __ __ __.



Խաղ 2-րդ. Փոխի՛ր տառը.

Each picture illustrates a common word. Change one letter of each word to produce the name of an animal.

[4] Տե՛ս Հ. Կարապետյան, Teaching Vocabulary with the Help of Games, Գյումրի, 2022, էջ 4:



Խաղ 3-րդ. Հինգ ընդհանուր տառեր.

The answer to each of the definitions below is a five-letter word. Each of these words ends in the same four letters but has a different first letter. What are they?

1. Power.

2. Vision.

3. Opposite of loose.

4. Not dark.

5. Opposite of wrong.

6. Not day.

7. Contend, struggle.

8. The number of this clue.

Խաղ. 4-րդ Միջին հանելուկ (Middle riddle).

Identify each of the pictures below. In the space beneath each picture write the middle letter of each word. For example, the first picture is an apple and the middle letter is P. When finished, the Middle Riddle will reveal an important thing that you can do to help the environment.



Խաղ. 5-րդ Mixed letters – CHRISTMAS

Write a word or words on the board. The students then race to identify the vocabulary.

Utyekr	Turkey	**wreyaen**	New Year	**setrepn**	Present
Gincokst	Stocking	**loarcs**	Carols	**mpcieien**	Mince pie
ayrpt	Party	**rete**	Tree	**duelwnlime**	Mulled wine
eeedrirn	Reindeer	**drac**	Card	**nwtire**	Winter
olhyl	Holly	**tloestime**	Mistletoe	**mevstaserich**	Christmas Eve
doyliha	Holiday	**owns**	Snow	**xobignady**	Boxing Day

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ խաղերի կիրառումը բառապաշարի ուսուցման գործընթացում արդյունավետության ապահովման կարևորագույն միջոցներից է: Դրանք ապահովում են երեխաների ոչ միայն ընդգրկվածությունը դասապրոցեսին, այլ նաև զարգացնում հաղորդակցվելու հմտությունները, ստեղծագործականությունը և իհարկե, ապահովում բառապաշարի ամրագրումը հիշողության մեջ: Խաղերի կրառումն ապահովում է աշակերտների սոցիալիզացիան (հասարակայնացումը), անգլերեն խոսելն ու մտածելը վերջիններիս համար դադարում է խորթ երևույթ լինել: Ոչ պակաս կարևոր է

թիմային աշխատանքի հմտություններ ձեռք բերելը: Այս տեսակ մեխանիզմները ուսուցիչներից և աշակերտներից առավել հետևողական և ստեղծագործական աշխատանք են պահանջում, բայց և միաժամանակ ապահովում են բավականին բարձր արդյունավետություն:

Եզրակացություն

Կատարված հետազոտությունը փաստում է, որ բառապաշարի ուսուցման բարդ սակայն անկյունաքարային գործընթացն առավել հաջողվում է, երբ ուսումնական գործընթացում հրաժարում է կատարվում մեխանիկական հիշողությունից մնեմոնիկ հիշողության օգտին:

Հարակցությունները, ռիթմավորված ոտանավորները, երգերը և դերախաղերը այս շարքում առավել հաճախ կիրառվող և բարձր արդյունավետություն ապահովող մեխանիզմներն են: Դրանք ոչ միայն ակտիվություն են հաղորդում դասապրոցեսին և բարձրացում ուսումնառության մոտիվացիան աշակերտների շրջանակում, այլ նաև ապահովում բառապաշարի ընկալման բարձր արդյունավետությունը:

Այս մեխանիզմները հաջողությամբ կիրառվել են ու շարունակում են կիրառվել: Այս համատեքստում նոր մեխանիզմներ առաջ քաշելն ու զարգացնելը կարող է դիտվել որպես օտար լեզվի դասավանդման ոլորտում մեծ հաջողություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հ. Կարապետյան, Teaching Vocabulary with the Help of Games, Գյումրի, 2022,
2. Ռ. Սոլսո, Կոգնիտիվ հոգեբանություն, 2002թ, 592 էջ
3. Ս. Գ. Տեր-Մինասովա, Լեզու և միջմշակութային հաղորդակցություն. ուս. ձեռնարկ, Մոսկվա, 2000թ, 624 էջ
4. Դ. Ս. Վաշչուկ, Դպրոցականների համար ամառային արձակուրդներին օտար լեզու սովորելու արտադասարանական միջոցառումների կազմակերպում, Tomsk State Pedagogical University Bulletin, 2011